

ՀՕՄ-ի Մոնթրեալի Սօսէ Մասնաճիւղը Գոհաբանութեան Օրուան Առթիւ Կը Հիւրասիրէ Manoir Cartievile-ի Տարեցները:

Գանատայի տարածքին Գոհաբանութեան օրը գեղեցիկ առիթ մըն է ընտանիքի մը անդամները մէկտեղելու, միասնաբար Աստուծոյ փառք տալու եւ ճոխ սեղաններու շուրջ վայելելու ուրախ ժամեր՝ հարազատներու ներկայութեամբ: Այս առթիւ, ՀՕՄ-ի Սօսէ մասնաճիւղի ընկերային յանձնախումբը հոկտեմբեր 13, 2015-ին կազմակերպած էր ճաշկերոյթ մը որուն նաեւ հրաւիրուած էին Manoir Cartievile-ի մէջ պատսպարուած հայ տարեցները: ՀՕՄ-ի Տարեցներ Այցելող Յանձնախումբի ընկերակցութեամբ շուրջ քսան տարեցներ եկեր էին վայելելու ՀՕՄ-ի հիւրասիրութիւնը ու հաճելի կէսօրէ վերջ մը անցնելու ՀՕՄ-ի հարազատ շունչին տակ:



Յատուկ փոխադրակառքերով եւ Տարեցները Այցելող յանձնախումբի ընկերուհիներու օգնութեամբ մամիկները ու պապիկները հասան Հայ Կեդրոն եւ ուղղութեան դէպի եկեղեցի ուր դիմաւորուեցան Սուրբ Յակոբ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ Տէր Գառնիկ Ա. Քինյ. Գոյունեանի եւ ՀՕՄ-ի ընկերուհիներու կողմէ: Բարի գալուստի խօսքերէն եւ աղօթքներէն ետք Տէր հայրը տարեցներուն մատուցեց Սուրբ Հաղորդութիւն: Աւելի ուշ խումբը բարձրացաւ Ա. Ահարոնեան սրահ, ուր հաւաքուած ՀՕՄ-ի ընկերուհիները ծափերով եւ ուրախութեամբ ընդունեցին իրենց հիւրերը: Միասնաբար արտասանուած

“Հայր Մեր”էն ու տօնական ճաշէն ետք սկսաւ երգահանդէս մը, որուն իրենց գնահատելի մասնակցութիւնը բերին տարեցները: Երգերուն, դաշնակի ընկերակցութիւնը կատարեց տարեցներ այցելող յանձնախումբի անդամ ընկի. Սեդա Թաւրիզեանը: Յիշենք, որ ընկի. Սեդան շաբաթներէ իվեր մեր տարեցներուն կը պարգեւէ հաճոյքի պահեր՝ քաջալերելով եւ վերակենդանցելով իրենց մէջ երգելու փափաքն ու սէրը: Շուտով երգերուն միացաւ նաեւ պարը՝ բացառիկ շէն մթնոլորտ պարգեւելով բոլոր ներկաներուն ու մանաւանդ մեր տարեցներուն:

Գոհաբանութեան ճաշկերոյթը եղաւ իսկապէս երախտագիտական զգացումներով լեցուն օր մը: Յատուկ շնորհակալութիւն երկար տարիներէ իվեր տարեցները այցելող յանձնախումբի անդամ ընկի. Թէոլինտա Կարապետեանին, որ ստանձնած էր այդ օրուայ ճաշի հիւրասիրութիւնը: Մեծապէս գնահատելի է ՀՕՄ-ի Ընկերային ինչպէս նաեւ Տարեցները Այցելող Յանձնախումբերու աստուծահաճոյ եւ օրինակելի աշխատանքը: Վարձքը կատար նաեւ Տէր Գառնիկ Ա. Քինյ. Գոյունեանի, որուն Manoir Cartievile-ի յաճախակի եւ հոգեպարար այցելութիւնները ու աղօթքները կը սփոփեն մեր տարեցները:

Տիրուկ Մանճիկեան